# Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար

## XII դասարան

## ( տևողությունը՝ 120 րոպե)

Սիրելի՛ մասնակից

Գարնանային բազմաթույր ծաղիկները թող հաղթանակի դափնի դառնան և զարդարեն քո անցնելիք ճանապարհը :Հաջողությո՛ւն:

**1.Գրի՛ր Չարենցի՝ Թումանյանին նվիրված քառյակներից որևէ մեկը և մեկնաբանի՛ր: 4մ.**

**2.Ի՞նչ ընդհանրություններ ունեն Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի և Գուրգեն Մահարու՝ իրենց ծննդավայրին նվիրված վեպերը: Գրել վեպերի վերնագրերը և հեղինակային բնութագրությունները: 4մ.**

**3.Ներկայացրո՛ւ Կոմիտասին՝ ըստ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի; Գրի՛ր սևակյան շրջասույթը Կոմիտասի մասին: 4մ.**

**4.Ներկայացրո՛ւ Համո Սահյանի «Չես ասի ոչ մի բառով» բանաստեղծությունը: Բացատրի՛ր վերնագիրը: Գրի՛ր երկու քառատող: 4մ.**

**5.Ե՞րբ է գրվել Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը. ի՞նչ է պատասխանում Արան Շամիրամին(Զա րյանի բառերով՝չափածո): Ո՞րն է ողբերգության պատմական հիմքը: 4մ.**

**Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան**